

ՀՈՒՐԵԼՅԱՆԱԿԱՆ ANNIVERSARY ЮБИЛЕЙ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ*

DOI:10.57155/GCXM8524

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Բանասիրության դոկտոր Լևոն Տեր-Պետրոսյանի 80-ամյա հոբելյանը լավագույն առիթն է արժեքները նրա անցած ուղին ու գիտական ժառանգությունը: Փորձենք մի քանի էջի սահմաններում ներկայացնել վաստակաշատ արևելագետ-հայագետի ներդրումը բանասիրության և պատմության ասպարեզում:

Որպես մասնագետ նա ձևավորվել է նախ Երևանի Պետական Համալսարանում, հատկապես Արևելագիտության ֆակուլտետում, ապա Սանկտ Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտում: Նշանակալից է Լևոն Տեր-Պետրոսյանի դերը ասորագիտության, հայ-ասորական գրական-մշակութային կապերի ուսումնասիրման ոլորտում: Նրա թե՛ թեկնածուական և թե՛ դոկտորական ատենախոսությունները վերաբերում են այդ բնագավառին, և դրանց հրապարակային պաշտպանությունները մեծ հաջողությամբ կայացել են Սանկտ Պետերբուրգում, քաղաք, որն ավելի քան երկու հարյուրամյակ համարվում է դասական արևելագիտության համաշխարհային խոշորագույն կենտրոններից մեկը: Տեր-Պետրոսյանը որպես գիտնական վերջնականապես ձևավորվեց արդեն Մաշտոցյան Մատենադարանում, որը նրա համար դարձավ հարազատ միջավայր թե՛ գիտական-ակադեմիական և թե՛ գործընկերական հարաբերությունների առումով: Այս ընթացքում նա ունեցավ բազմաթիվ ուսուցիչներ, դասախոսներ ու ավագ գործընկերներ, որոնք կարևոր դեր խաղացին իր մասնագիտական կյանքում՝ մարդիկ, որոնց հետ Տեր-Պետրոսյանը առնչվել է թե՛ ուսումնառության և թե՛ աշխատանքային գործունեության ընթացքում: Թվենք նրանցից մի քանիսին՝ Նինա Վիկտորովնա Պիգուլևսկայա, Իգոր Միխայլովիչ Դյակոնով, Ավրաամ

* Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., vterghevondian@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 23 հոկտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 10 հոկտեմբերի, 2025:

Գրիգորեկի Նունդին, Ազա Վաղիմիրովնա Պայկովա, ապա նաև՝ Լևոն Խաչիկյան, Գագիկ Սարգսյան, Էդվարդ Աթայան, Հակոբ Անասյան, Ռաֆայել Իշխանյան, Կարեն Յուզբաշյան, Պողոս Խաչատրյան:

Հեղինակի «Հայ-ասորական գրական կապերը IV-V դարերում. ասորական գրականության դերը հայ հին մատենագրության ձևավորման մեջ» դոկտորական թեզը առանձնակի կարևորություն ունի վաղբրիստոնեական ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքի ժողովուրդների քաղաքական և մշակութային կապերի լուսաբանման, Քրիստոնյա Արևելքի պատմության ուսումնասիրման համար: Ահա թե ինչու Մաշտոցյան Մատենադարանը տարիներ անց ձեռնարկեց այդ հիմնարար հետազոտության հրատարակությունը, որը լույս տեսավ 2022 թվականին¹: Այս գրքում քննության է առնվում ասորերենից հայերեն թարգմանության մեզ հասած մեծաքանակ և հարուստ գրականությունը: Հատկապես հետաքրքրական է թեզի երրորդ գլուխը, որում բացահայտվում է հայերեն թարգմանություններում ասորաբանությունների և ասորերենին հատուկ լեզվական կառույցների առկայությունը: Դոկտորական թեզում առաջ է քաշվում մի յուրօրինակ համակարգ, որի միջոցով հնարավոր է դասակարգել հայ գրականության Ոսկեդարի գրավոր հուշարձանները: Միջնադարագետները մեկ անգամ չէ, որ հետաքրքրություն են ցուցաբերել հատկապես այս աշխատության նկատմամբ՝ ընդգծելով հեղինակի վերահանած հայեցակարգերի և մեթոդաբանության կիրառման կարևորությունը: Տեր-Պետրոսյանի այս արժեքավոր ուսումնասիրությունը շատ բարձր են գնահատել այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք են ակադեմիկոսներ Իվան Ստեբլին-Կամենսկին և Միխայիլ Պրոտորովսկին, գիտության դոկտորներ Ավրամ Լունդինը, Իլյա Շիֆմանը, Ալեքսանդր Խոսրոբը², Ֆրանսիացի նշանավոր արևելագետ Բեռնար Ուտիեն³, Սորբոնի համալսարանի փոխնախագահ, բյուզանդագետ Միշել Կապլանը⁴ և ուրիշներ:

Այսպես քրիստոնեության տարածումից, գրերի գյուտից ու Սուրբ Գրքի թարգմանությունից մինչև փառահեղ Ոսկեդար և գրականության հետագա զարգացման ընթացք, հայ մշակույթը հենվել ու սնվել է երկու մեծ քաղաքակրթություններից՝ ասորական և հունաբյուզանդական, ընդ որում, վաղագույն շերտը հենց ասորականն է: Գրերի գյուտից անմիջապես հետո թարգմանական աննա-

¹ Գիրքը, ինչպես և խորհրդային շրջանում պաշտպանված ատենախոսությունը, ուսերեն են՝ *Армения и христианская Сирия: культурные связи (IV-V вв.)*, Ереван, 2022:

² Այս բոլոր գիտնականների կաթիլները զետեղված են հետևյալ գրքում՝ *Сиро-армянские литературные связи в IV-V вв. Материалы записки докторской диссертации*, составитель **Аветис Авакян**, Санкт-Петербург – Ереван, 2015, сс. 74-77:

³ Գիտնականը և նախագահը, Լևոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ, կազմող և ձևավորող՝ **Ավետիս Ավագյան**, խմբագիր՝ **Աշոտ Սարգսյան**, Երևան, 2019, էջ 65-69:

⁴ Նույն տեղում, էջ 74-78:

խաղեպ հզոր շարժումը, հենվելով արդեն իսկ հարյուրամյա բանավոր թարգմանական ավանդույթի վրա, մի քանի տասնամյակի ընթացքում ոչ միայն զուտ քրիստոնեական, այլև ողջ համաշխարհային գիտելիքի լավագույն նմուշները փոխանցեց ու ներմուծեց հայ իրականությանը՝ մեր ազգային մշակույթը հասցնելով այդ պահին հնարավոր ամենաբարձր մակարդակին: Անշուշտ, շատ արագ զարգացավ նաև ինքնուրույն գրականությունը, որը գիրկընդխառն ընթանալով թարգմանականի հետ, կերտեց նախ անկրկնելի Ոսկեդարը, ապա վայրիվերուններով իր զարգացումն ապրեց մինչև մեր օրերը: Այս մասին ինքը՝ հեղինակը շատ դիպուկ բնորոշում է տալիս. «Պատմամշակութային տեսակետից թարգմանական և ինքնուրույն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով դրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարաթեք կողմերը»⁵:

Կասկածից վեր է, որ հայ մատենագրության ու հատկապես գրական-աստվածաբանական բնույթի երկերի ուսումնասիրողն առաջին հերթին պետք է դիմի ասորերեն և հունարեն երկերին, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել հայերեն թարգմանական գործերի հետազոտությանը, համեմատական-քննական բնագրերի պատրաստումը, տարբերությունների քննությունը, տարընթերցումները և բազմաթիվ այլ բանասիրական-բնագրագիտական հարցեր: Այս բնագավառում հանգուցային դեր ունի բանասեր հայագետ-ասորագետը, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է վաղքրիստոնեական շրջանին, երբ մեծաքանակ թարգմանություններ են արվել ոչ միայն բուն ասորական երկերից, այլև նախապես հունարեն ստեղծված երկերի ասորերեն տարբերակներից. այդպիսի կարևոր երկ է, օրինակ՝ IV դարի «Եկեղեցու պատմահայր» Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցու պատմությունը»⁶:

Եթե երվանդ Տեր-Մինասյանը (1879-1974)՝ հայ ասորագիտության նահապետը, հայտնի է որպես հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների փայլուն գիտակ, իսկ Հայկ Մելքոնյանը (1923-1983) որպես հայ-ասորական քաղաքական-տնտեսական բազմաշերտ հարաբերությունները լուսաբանող նշանավոր պատմաբան, ապա Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ որպես հմուտ բանասեր, հայ-ասորական գրական-մշակութային կապերի մասնագետ՝ այդ ասպարեզում դառնալով անգերազանցելի:

⁵ Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 6:

⁶ Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցւոյ, յեղեալ յասորոյ ի հայ ի ճինգերոդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Զարեան Վեմետիկ, 1877:

Նրա «Հայ հին թարգմանական գրականություն» գիրքը⁷ (թարգմանված մի քանի լեզուների, անգամ՝ ճապոներեն⁸) նվիրված է V-XVIII դարերում ասորերենից, հունարենից, լատիներենից, վրացերենից, արաբերենից և այլ լեզուներից հայերեն թարգմանություններին՝ սկսած անմիջապես գրերի գյուտից: Տեր-Պետրոսյանի այս ամփոփիչ գործը հմուտ կերպով երևան է հանում թարգմանական գրականության կարևորագույն ասպեկտները, անդրադարձ է կատարում այդ գործի զարգացման օրինաչափություններին և փուլերին, թարգմանիչներին և նրանց երկերին, ընդգծում միայն հայերեն թարգմանություններով պահպանված ձեռագրերի կարևորությունը համաշխարհային գիտական մտքի համար:

Բացի աղբյուրագիտական կարևոր աշխատանք լինելուց, գիրքը այսօր նաև ուղեցույց է դարձել թարգմանական գործով զբաղվողների, թարգմանության պատմությունն ու տեսությունը ուսումնասիրողների համար և որպես ձեռնարկ ընդգրկված է համալսարանական ծրագրերում:

Ղևոն Տեր-Պետրոսյանը մեծ հեղինակություն է նաև կրիլիաագիտության ասպարեզում: Հետազոտությունների այս ոլորտը անշուշտ սերտորեն առնչվում է ասորագիտության հետ, բայց երկու ասպարեզների միջև մի քանի դարի տարբերություն կա: Խոսքը IV-V դարերից մինչև XII-XIV դարերը անցումի մասին է, որը ևս պատահական չէ ընտրված: Հայ-ասորական սերտ կապերի նոր փուլի համար մեծ դեր են խաղացել միաժամանակ ընթացող երկու երևույթ՝ հայերի զանգվածային գաղթը և Կրիկյան Հայաստանի ձևավորումն ու ծաղկումը Մեծ Ասորիքի անմիջական հարևանությամբ և, սրան զուգահեռ, ասորական մշակույթի նոր վերելքը այդ նույն XII-XIV դարերում:

Կրիկյան Հայաստանին ուսումնասիրողը մոտեցել է ամենատարբեր տեսանկյուններից՝ աղբյուրագիտություն, քաղաքական պատմություն, պատմաքաղաքագիտական քննություն, հայ-ասորական և հայ-լատին կապեր, մատենագրական-թարգմանական-լեզվական առնչություններ: Հայոց պատմության և մշակույթի այդ փուլը ուսումնասիրող որևէ մասնագետ չի կարող շրջանցել Տեր-Պետրոսյանի հրատարակած կրիլիաագիտական հետազոտությունները: Հատկապես հիշատակության են արժանի «Օտար աղբյուրները Հայաստանի և հայե-

⁷ Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն: Այս զբոյլը մաս է կազմում Մատենադարանի Գիտահամալսարանի մատենաշարի: Նույն նյութի ակադեմիական շարադրանքը տե՛ս «Փորձ հայ հին և միջնադարյան գրականության պարբերացման», էջմիածին, 1982, Գ, էջ 45-52:

⁸ Л. Тер-Петросян, Древнеармянская переводная литература, Ереван, 1984, L. Ter-Petrosian, La littérature arménienne ancienne de traduction, trad. franç. par Aïda Tcharkhtchyan, Erevan, 1984, L. Ter Petrosian, Ancient Armenian Translations, English translation by Krikor Maksoudian, Western Armenian translation by Nubar Kupelian, New York, 1992: Կա նաև նապոներեն թարգմանություն՝ Ancient Armenian Translations, translated from Armenian by professor of Hokkaido University Toda Satoshi, Tokyo, 2013:

րի մասին» մատենաշարով լույս տեսած «Անանուն եղեսացու ժամանակագրությունը»⁹, երկհատոր հիմնարար «Խաչակիրները և հայերը»¹⁰, ինչպես նաև նույն թեմայով մի շարք արժեքավոր հոդվածներ¹¹:

Հայագիտության մեջ նորարական խոսք ու թարմ շունչ բերեց «Խաչակիրները և հայերը» աշխատությունը: Նախ, հայերի և խաչակիրների հարաբերություններին նախորդ ուսումնասիրողներն անդրադարձել էին հիմնականում Կիլիկյան Հայաստանի պատմության ընդհանրական շարադրանքի մեջ: Մինչդեռ Միջերկրականի ափերին ձևավորված հայկական պետության համար բյուզանդական, լատին, սելջուկյան, արաբական, մոնղոլական ամենատարբեր միավորների խճանկարում արտաքին հարաբերությունները ունեին կենսական նշանակություն: Պատահական չէ, որ մեր պատմության ողջ ընթացքում դիվանագիտությունը երբեք այդքան մեծ նշանակություն չի ունեցել, որքան կիլիկյան շրջանում: Ուստի, Տեր-Պետրոսյանի ուսումնասիրությունը լրացնում է հայոց թագավորության պատմության մի մեծ բաց և ամբողջացնում 300-ամյա պետության բարդ հարաբերությունների ներքին ծալքերը:

Նորույթներից մեկն այն էր, որ առաջին հատորում, բացի խաչակրաց արշավանքների և Արևելքում հիմնված լատին պետությունների մասին քննական ակնարկից, մեծ տեղ է հատկացված XX դարի չորս ականավոր բյուզանդագետ-արևելագետների (Ֆերդինանդ Շալանդոն, Ռենե Գրուսե, Ստիվեն Ռանսիմեն և Սիրարփի Տեր-Ներսեսյան) ուսումնասիրություններին, որոնց մենագրություններից Կիլիկիա-խաչակիրներ հարաբերություններին վերաբերող մասերը ֆրանսերենից և անգլերենից բարձրարժեք թարգմանությամբ մատուցված են հայ ընթերցողին:

Հարկ է նշել, որ մեր ժողովրդի հազարամյա պատմության մեջ կան փուլեր, երբ հայտնվել ենք տվյալ պահին համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունների կիզակետում: Ահա այդպիսի մի շրջան է Կիլիկյան Հայաստանի պատմությունը, որը միախառնված է աշխարհը ցնցած խաչակրաց

⁹ **Անանուն եղեսացի**, ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի (Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին, հ. 12, Ասորական աղբյուրներ, հ. Բ), Երևան, 1982: Ասորական մշակութային նոր վերածննդի մաս կազմող երեք անգերագանցելի պատմիչներից (Անանուն եղեսացի, Միխայել Ասորի, Բար Հեբրեոս) մեկի երկի հատվածական թարգմանությունը՝ իր գիտական ապահատով, առատ նյութ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի մասին, ընդ որում, երբեմն այդ տեղեկությունները եզակի են ու բացառիկ:

¹⁰ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Ա-Բ, Երևան, 2005 և 2007:

¹¹ Լ. Տեր-Պետրոսյան, «Ասորիների դերը Հայկական Կիլիկիո մշակութային կյանքում ժԲ-ԺԳ դարերում», *Բազմավեպ*, 1987, էջ 122-161, Լ. Տեր-Պետրոսյան, «Ասորական աղբյուրները ժԲ-ԺԳ դարերի հայ-ասորական հարաբերությունների մասին», *Բազմավեպ*, 1988, էջ 112-154 (էջ 149-154, ֆրանսերեն ամփոփում):

արշավանքներին, ապա նաև մոնղոլական աշխարհակալությանն ու մամլուքներ-մոնղոլներ մեծ հակամարտությանը: Հենց դրանով է բացատրվում XIX-XX դարերի խոշորագույն պատմաբանների ցուցաբերած առանձնահատուկ հետաքրքրությունն այս նյութի հանդեպ:

Տեր-Պետրոսյանի կատարած բուն հետազոտական աշխատանքն ամփոփված է երկրորդ հատորում, որը նա անվանել է պատմաքաղաքագիտական հետազոտություն: Աշխատության առանցքը կամ ելակետը իշխանության օրինակարգության հետ կապված հարցերի ուսումնասիրումն է, ուստիև՝ այն վերնագրված է «Գահաժառանգության իրավունքը և իշխանության «լեգիտիմությունը» Կիլիկյան Հայաստանում»: Իրադարձությունների ընկալման այս «բանալիով» նորովի է բացվում ու ներկայանում Կիլիկյան հայկական պետության՝ շատ դրվագներով այսօր էլ ուսանելի պատմությունը: Արձանագրվում են երկրի քաղաքական ընտրանու պետական մտածողությունը, իրատես քաղաքական միտքը, երբ իշխանները, թագավորները, կաթողիկոսները խուսանավելով, պայքարելով, տարբեր դաշինքների մեջ մտնելով, դիվանագիտական զանազան հնարքներ բանեցնելով, կարողացան բարդ աշխարհաքաղաքական շրջապատում ապահովել Մեծ Հայքից դուրս գոյացած հայկական այս պետության հարատևումը շուրջ 300 տարի: Սա մեր իրականության մեջ պատմության նման մեթոդով հետազոտման իր տեսակի մեջ առաջին փորձն է՝ ակնկալելի, որ կիրառվի նաև Հայոց պատմության այլ դարաշրջանների ու փուլերի նկատմամբ:

Եթե IV-V դարերին վերաբերող գործերում Լևոն Տեր-Պետրոսյանը հմուտ աղբյուրագետ-բանասեր է, ապա XII-XIV դարերին անդրադառնալիս, դրան գումարվում են պետական գործչի փորձով ու զգացողությամբ հարստացած պատմաբան-քաղաքագետի ոչ պակաս խոր մասնագիտական որակները: Այս ասպարեզում հետազոտությունների մասնագիտական խորությունն ու բարձր մակարդակը ապահովվում է արևելյան ու եվրոպական մոտ մեկ տասնյակ լեզուների փայլուն իմացությամբ:

Արդեն նշված մենագրությունների ու աղբյուրների հրատարակությունից զատ հոբելյարը հեղինակել է ևս երկու առավել փոքր ծավալի գրքեր, որոնք թարգմանվելով ու տարածվելով՝ միջազգային լայն արձագանք են ստացել: Դրանք են «Ասորիների դերը Հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դարերում»¹² և «Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից, ե դար»¹³:

Հոգվածի սահմանափակ շրջանակում անհնար է մեկ առ մեկ անդրադառնալ Տեր-Պետրոսյանի բոլոր հոգվածներին, որոնք արժեքավոր ներգրում են թե՛ հայագիտության և թե՛ ասորագիտության ասպարեզում: Դրանք նվիրված են

¹² Հայագիտական մատենաշար Բազմավեպ, թիվ 28, Վենետիկ-Ս.Ղազար, 1989, 89 էջ:

¹³ Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից, ե դար, Սոչի, 1993, 80 էջ:

այնպիսի հեղինակների ինչպիսիք են՝ Եփրեմ Ասորին, Բարսեղ Կեսարացին, Հակոբ Սրճեցին, Կյուրեղ Երուսաղեմացին, Եվսեբիոս Եմեսացին, Աբրահամ Խոստովանողը, նրանց գործերը, թարգմանությունները և առնչվող տարաբնույթ բանասիրական խնդիրների լուսաբանումը¹⁴:

Տեական պրպտումներ կատարելով հայոց Ոսկեդարի գանձարանում, Տեր-Պետրոսյանը չէր կարող չանդրադառնալ Ագաթանգեղոսին և նրա «Հայոց պատմությանը»: Նշենք, որ այս երկը և մանավանդ նրա մի մասը կազմող «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» իր համաքրիստոնեական բնույթի շնորհիվ դեռևս միջնադարում միջազգային լայն ճանաչման է արժանացել, թարգմանվելով հունարեն, արաբերեն, ասորերեն, լատիներեն, եթովպերեն և սլավոներեն: Բնականաբար Տեր-Պետրոսյանը իր նպաստը պիտի բերեր առաջին հերթին Ագաթանգեղոսի ասորական տարբերակի ուսումնասիրությանը՝ այդ ասպարեզում նրա հիմնական հոգվածներն ու դասախոսությունները շարադրված են 1980-ական թվականներին: Գիտակցելով այդ բոլորը մեկտեղելու կարևորությունը, վերջին տարիներին հետազոտողը դրանք հրատարակել կամ վերահրատարակել է՝ ամփոփելով մեկ հատորի մեջ: Այն լույս է տեսել «Ագաթանգեղապետական պրպտումներ» վերտառությամբ 2019 թվականին: Ուշագրավ է, որ գրքում զետեղված է նաև բուն քննության առարկան՝ Ագաթանգեղոսի ասորերեն թարգմանության տեքստը, որի գիտական հրատարակությունը իրականացրել է բելգիացի արևելագետ-հայագետ Միշել վան Էսբրոկը դեռևս 1977 թվականին: Պատահական չէ, որ Տեր-Պետրոսյանը այս ամբողջ հատորը արժանիորեն նվիրել է մեծ գիտնականի հիշատակին:

Վերջապես պետք է անդրադառնանք նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ հոբեյարի գործակցությանը, որն առաջին հերթին արտահայտվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասախոսական գործունեությամբ, որտեղ նա 1982-1988 թվականներին «Հայ եկեղեցական մատենագրություն» առարկան է դասավանդել՝ պատրաստելով հոգևորականների նոր սերունդ: Եկեղեցու հետ գործակցության ևս մի կարևոր հանգրվան է Աստվածաշնչի արևելահայերեն նոր թարգմանությունը: Երջանկահիշատակ Վազգեն Ա վեհափառ հայրապետի այս ձեռնարկը իր լրումին հասավ 1994 թվականին: Թարգմանիչների խմբում էր նաև Լևոն Տեր-Պետրոսյանը, որը հմուտ թարգմանությամբ ժամանակակից արևելահայերեն գրական լեզվով հնչեցրեց Հին Կտակարանի կարևոր մասերից մեկը՝ Դավթի Սաղմոսների գիրքը:

Տեր-Պետրոսյանի գիտական գործունեությունն ըստ արժանվույն գնահատվել է: Նա ԽՍՀՄ արևելագետների ընկերակցության անդամ է, 1988 թվականից

¹⁴ Մանրամասն մատենագիտությունը տե՛ս Տոնազիր, Գիտական ժողովածու Լևոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ, Երևան, 2021, էջ 26-36:

Հայաստանի գրողների միության անդամ, 1989 թվականից՝ Ֆրանսիական Ասիական ընկերության անդամ, 1991 թվականից՝ Վենետիկի Միլիթարյան ակադեմիայի անդամ, նաև Ստրասբուրգի, Լա Վեռնի, Սոֆիայի և Սորբոնի համալսարանների պատվավոր դոկտոր:

Ներկայացված գիտական ժառանգությունը, ինքնին պատկառելի տպավորություն է թողնում, բայց դրանք հոբեյարի միայն հրատարակված գործերն են: Նշենք, որ մեծ թիվ են կազմում նաև անտիպները՝ որոնք մի քանի տասնյակ են¹⁵: Ճիշտ է, վերջերս դրանց թիվը որոշ չափով կրճատվել է, օրինակ, ինչպես արդեն նշվեց, 35 տարի անց լույս տեսավ դոկտորական թեզը¹⁶, բայց դեռ շատերը սպասում են իրենց հերթին: Անտիպների մեջ ես հատկապես կառանձնացնեի երկու առավել ծավալուն գործեր՝ «Ասորաբան հայերեն. ասորերենի ազդեցությունը դասական հայերենի վրա» և «Հայ-ասորական մատենագիտություն»: Կարծում եմ՝ Մաշտոցյան Մատենադարանի և մեր այլ գիտակրթական կենտրոնների հետագա ուսումնասիրությունների համար կարևոր նշանակություն կունենա այդ գրքերն ու հոդվածները լույս ընծայելը: Նման հրատարակությունները մեզանում զարկ կտան ասորագիտությանը և ավելի լայն առումով սեմագիտությանը: Իսկ Հայաստանում սեմագիտության զարգացումը ունի ինչպես գիտական-ակադեմիական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն: Վերջապես, այն կխրախուսի երիտասարդ սերնդին մասնագիտանալու և հետազոտություններ իրականացնելու բացառիկ կարևոր այս ասպարեզում:

Ղևոն Տեր-Պետրոսյանի կյանքում Մաշտոցյան Մատենադարանը մշտապես յուրահատուկ տեղ է գրավել: Նաև այն տարիներին, երբ ամբողջովին ներգրավված էր քաղաքական-պետական գործունեության մեջ, նա մշտապես հետաքրքրվել է Մատենադարանի վիճակով, ուրախացել նրա հաջողություններով: Իսկ Մատենադարանի աշխատակիցները, թե՛ իր նախկին գործակից-սերնդակիցները և թե՛ երիտասարդ սերունդը նրան ընկալել են որպես հարազատ մարդ, որպես «հավերժական մատենադարանցի»: Ուստի պատահական չեմ համարում, որ անվանի գիտնականի ու բացառիկ մտավորականի հոբեյանը նշվում է հենց այս կամարների տակ: Ամփոփելով խոսքս՝ ցանկանում եմ հատուկ շնորհակալություն հայտնել Մաշտոցյան Մատենադարանի տնօրենությանը և կազմակերպիչներին Ղևոն Տեր-Պետրոսյանի 80-ամյակին նվիրված այս գիտաժողովը նախաձեռնելու և հաջողությամբ իրականացնելու համար, իսկ հոբեյարին մաղթել անսասան առողջություն ու լավ տրամադրություն, ինչպես նաև գիտական աշխատանքը նոր թափով շարունակելու ուժ ու եռանդ:

¹⁵ Տե՛ս Տոնագիր, էջ 34-36:

¹⁶ Տե՛ս ծան. 3: